

<ՏՏ 37.01(573)

Կենսաբանություն դասավանդման մեջողիկա

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Վարդուհի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի քառեր՝ մանկավարժական մեթոդներ, պատմել, ցուցադրություն, լաբորատոր աշխատանք, էքսկուրսիա, *S&S* միջոցներ, գրավիչ մուտք, պրոբլեմային իրավիճակ, գրավիչ ելք, ցուցադրական աշխատանք, ուսումնական ձևավորդություն:

Ключевые слова: педагогические методы, пересказ, выставка, лабораторная работа, экскурсия, инструменты ИКТ, привлекательный вход, проблемные ситуации, привлекательный выход, демонстрационная работа, ознакомительная поездка.

Keywords: pedagogical methods, retelling, exhibition, laboratory work, excursion, ICT tools, attractive entrance, problematic situations, attractive exit, demonstrative work, study tour.

Творческий подход учителя к урокам биологии

B. Оганесян

В статье говорится о различных педагогических методах, используемых в преподавании биологии в средних учебных заведениях. Методы являются инструментами и средствами информирования, посредством которых учитель влияет на сознание и чувства учащихся информацией, способствуя формированию их мировоззрения. Творческий подход дает учителю возможность эффективно организовывать урок и обучать учеников мыслить, рассуждать и самостоятельно делать выводы.

TEACHER'S CREATIVE APPROACHES TO BIOLOGY CLASSES

V. Hovhannisyan

The article includes various methods and tools used in teaching biology in secondary education institutions, which are tools and means of communicating knowledge, and through which the instructor influences the students' awareness and senses by providing them with new information, promoting their outlook. At the same time it gives the teacher an opportunity to organize the lesson in a scientific way, and the students to think independently, to judge and make final conclusions.

Հոդվածում տեղ են գտել հանրակրթական ուսումնական հաստատություններում կենսաբանության առարկայի ուսուցման ժամանակ կիրառվող տարարնույթ մեթոդներն ու հնարները, որոնց օգնությամբ ուսուցիչը, ներգործելով սովորողների գիտակցության ու զգացմունքների վրա՝ նոր տեղեկություններ է հաղորդում, նպաստում աշակերտների աշխարհայացքի ձևավորմանը: Ուսուցման նկատմամբ ցուցաբերված ստեղծագործական մոտեցումը ուսուցչին հնարավորություն է տալիս արդյունավետորեն կազմակերպելու դասը, իսկ սովորողներին՝ ինքնուրույն մտածելու, դատելու, եզրահանգումներ կատարելու:

Ուսուցչի ստեղծագործական մոտեցումները կենսաբանության դասերին

<<Առանց խորապես իմանալու այն գիտությունը ,
որը դասավանդում է ուսուցիչը,
չկա մանկավարժական կողմության>>:
Վ.Ա. Սոլիսոնինսկի

Հանրակրթական ուսումնական հաստատություններում կենսաբանության առարկայի ուսուցման ժամանակ կիրառվող տարարնույթ մեթոդներն ու հնարները այն միջոցներն են, որոնց օգնությամբ ուսուցիչը, ներգործելով սովորողների գիտակցության ու զգացմունքների վրա՝ նոր տեղեկություններ է հաղորդում, նպաստում աշխարհայացքի ձևավորմանը: Այդ մեթոդներն ուսուցչին հնարավորություն են տալիս գիտականորեն կազմակերպելու դասը, իսկ սովորողներին՝ ինքնուրույն մտածելու, դատելու, վերջնական եզրահանգումներ կատարելու: Մանկավարժական գիտությունների դոկտոր՝ Մ. Ա. Ակրտչյանն այն տեսակետն է հայտնում, որ դաս-դասարանային համակարգը այլևս չի բավարարում հասարակության պահանջները, և որ ժամանակն է այն փոխարինելու ուսուցման կողեկտիվ ձևով [1]: Մեկ այլ դիտարկում էլ ներկայացված է մասնագիտությամբ ֆիզիկոս,

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու U. R. Գալյանի աշխատության մեջ, ըստ որի առաջարկվում է կրթության հիմքում ստեղծել մարդ-բնության մասին գիտա-փիլիսոփայական գիտելիքների համակարգ, որը ուղենիշ կիանդիսանա ուսուցման և դաստիարակության գործընթացների կազմակերպման համար [3]: Յուրաքանչյուր գործնական պարապմունքի ժամանակ ուսուցիչը մեկնեղում է սովորողների դաստիարակությունն ու կրթությունը, ընտրում է ուսուցման այնպիսի մեթոդ, երբ ամպայման հաշվի են առնվում սովորողների տարիքային առանձնահատկությունները, ընտրված հյուրի դաստիարակչական բովանդակությունը, ինչպես նաև դասարանի պատրաստվածության աստիճանն ու նակարդակը:

Կախված ուսուցանվող թեմաներից ու նրանում շշափող հարցերի բնույթից՝ ուսուցիչը պետք է հաշվի առնի նաև դասարանի դիրակտիկ կահավորանքի հնարավորությունները:

Կենսաբանության գործնական պարապմունքների ժամանակ ուսուցչի կողմից կիրառվող մեթոդներն են.

1. Պատմելու կամ խոսքային
2. Ցուցադրական
3. Լաբորատոր-գործնական պարապմունքների
4. Էքսկուրսիայի:

Գաղտնիք չէ, որ պատմելը, բացատրելը գիտելիքներ հաղորդելու ձևերից մեկն է, որի ընթացքում ուսուցիչը սովորողների ուշադրությանն է ներկայացնում նյութի հիմնական բովանդակությունը: Գործնական պարապմունքների ժամանակ պատմելու մեթոդը կիրառվում է հատկապես այն ժամանակ, երբ անհրաժեշտ է խնդիրների, առաջադրանքների, անվտանգության տեխնիկայի կանոնների հետ առնչվող հարցերի, գիտության նվաճումների մասին տեղեկություններ հաղորդել:

Հատ հաճախ գործնական պարապմունքների ժամանակ պահանջ է զգացվում կիրառելու բացատրելու մեթոդը, հատկապես, երբ այն ուղեկցվում է որևէ նյութի ցուցադրման՝ փորձ, մակետներ, պատտառներ, գծապատճեր, մանրադիտակային ուսումնասիրության համար նախատեսված պատրաստուկներ և այլն: Առավել հետաքրքիր է զրույցի ձևը, որի հիմքում ուսուցչի ու աշակերտի երկխոսությունն է: Զրույցի մեթոդի առավելությունն այն է, որ սովորողներին հանարավորություն է տալիս պարզել ու իմաստավորել աշխատանքային տարրեր գործնական աշխատանքներում կիրառելու ուղիները: Գործնական պարապմունքների ժամանակ տարաբովանդակ զրույցների անցկացման մեթոդիկային գումարվում են նաև ցուցադրությունները:

Զննական մեթոդի կիրառումը ուսուցման կարևորագույն միջոցներից է, քանզի առանց կենդանի օրինակների ցուցադրման ոչ կարելի է ճիշտ սովորեցնել, ոչ էլ հաջողությունը սովորեցնել: Այստեղ մեկ անգամ ևս տեղին է հիշել հայտնի ասացվածքը:

<<Պատմիր ինձ, և ես կմոռանամ:

Ցույց տուր ինձ, և ես կիիշեմ:

Ներգրավիր ինձ, և ես կհասկանամ>>:

Հմուտ ուսուցիչը, աշակերտներին ներգրավելով ակտիվ ուսուցման պրոցեսում, հասնում է նրան, որ բանավեճի, համագործակցության, ընդհանուր բննարկումների արդյունքում ակտիվանում է սովորողների մտածողությունն ու եզրահանգումներ կատարելու կարողությունը: Այս մեթոդի ընտրության դեպքում ցուցադրվում է առարկան, բնական օրեկտը՝ կենդանի, նրա խրտվիլակը, կմախքը, հերբարիումը, մանրադիտակային ուսումնասիրության համար նախատեսված թաց կամ չոր պատրաստուկը: Կենսաբանության գործնական պարապմունքների ժամանակ կիրառվում են նաև զննական պարագաների նմուշների ցուցադրություններ՝ պատառներ, գծապատճեր, աղյուսակներ, սխեմաներ, որոնք սովորողներին պատկերացնում են տալիս ուսումնասիրվող օբյեկտների ձևի, կառուցվածքի, գույնի, մեծության, կենսակերպի մասին: Մեթոդի առավելություններից է այն, որ ուսուցչի բացատրություններն ուղեկցվում են ցուցադրություններով, որի դեպքում ուսումնասիրվող նյութն էլ ավելի տեսանելի է դառնում: Մի խոսքով. <<Պետք է եղածին չափ քիչ ուսուցանել, և կարելի եղածին չափ շատ գտնել տալ>> (Հ.Սպենսերի):

Ժամանակակից դասին ներկայացվող պահանջների մեջ կարևոր է առանձնացնել S&S-ի միջոցների՝ համացնցի ռեսուրսային հնարավորությունների լայն կիրառությունը դասի արդյունավետության ապահովման գործում: Ուսուցման բարդ ու հետաքրքիր պրոցեսում որքան բազամազան լինեն զգայարանների վրա ներգործող գործոնները, այնքան սովորողները հեշտությամբ կընկալեն ու կյուրացնեն մատուցվող նյութը:

Այսօր կենսաբանության ուսուցիչը, զինված լինելով մանկավարժական ու մեթոդական նորագույն գիտելիքներով, ձեռքի տակ ունի այն բոլոր հնարավորությունների բազան, որից օգտվելով կարելի է կազմակերպել գեղեցիկ ու գրավիչ դասեր: Օգտվելով տարբեր օժանդակ նյութերից՝ ուսուցչին հնարավորություն է տրվում դասը դարձնելու ցանկալի ու հետաքրքիր, հատկապես, եթե խոսքը վերաբերվում է խթանման փուլում դասի գրավիչ մուտքի ապահովմանը:

Դասի սկզբում, կիրառելով գրավիչ մուտքի մեթոդը, ուսուցիչը նպաստում է երեխաների տրամադրությունների ստեղծմանը՝ նրանց տալով մտածելու, կոահելու և ստեղծագործելու հնարավորություններ:

Այսպես, <<Վերարտադրողական համակարգ>> թեմայի ուսուցման ընթացքում նպատակահարմար է գործնականում կիրառել աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքը, երբ դասը վարում են 9-րդ դասարանցիները և իրենց գիտելիքներն են փոխանցում 8-րդ դասարանցիներին: Դասի հենց սկզբում, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, ուսուցիչն աշակերտների ուշադրությանն է արժանացնում ԿԳ-Ս նախարարության կողմից դպրոցին հասցեազրիված ենթադրյալ նամակը, որում իբր առաջարկվում է քննարկել և համապատասխան առաջարկություն ներկայացնել հետևյալ հարցի վերաբերյալ. 8-րդ դասարանի կենսաբանության դասագրքերից հանել <<Վերարտադրողական համակարգ>> թեման: Ահա այս հարցի կապակցությամբ առաջարկվում է քննարկել և հիմնավոր ձևով պատասխանել ԿԳ-Ս նախարարությունից իբր ստացված նամակին:

Գեղեցիկ պլանավորած դասը պիտի ունենա ինչպես գրավիչ մուտք, այնպես էլ՝ գրավիչ ավարտ, ուստի դասի կշռադաշտման փուլում ուսուցիչն անդրադառնում է խթանման փուլում առաջ քաշած խնդրին: Նա կազմակերպում է նամակի պատասխանի մշակման աշխատանքը, որն իբր պետք է ներկայացվի ԿԳ-Ս նախարարություն:

Նոր՝ <<Ուկուց Էլ թանկ՝ ջուրը...>> նյութի հաղորդման ժամանակ սովորողների ուշադրությունը կենտրոնացնելու նպատակով նույնապես անհրաժեշտ է ապահովել գրավիչ մուտք: Զրերի լեզուն յուրացրած գիտնականը մի առիթով ասել է, որ եթե իրեն հնարավորություն ընձեռվեր կազմակերպելու մի փոքրիկ արտադրություն, ապա մարդկանց ուշադրությանը կարժանացներ սեղանի վրայի ջրով լցված 4 սրվակների պարունակությունը: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր ազդեցությունների մեխանիզմը օրգանիզմի վրա: Այս մուտքը լսելուց հետո լրություն է տիրում դասարանում, բոլորը խոհուն ու հարցական հայացքներով հետևում են ուսուցչին: Դասի կշռադաշտման փուլում ուսուցիչն անդրադառնում է խթանման փուլում վեր հանած խնդրին՝ հարցնելով.

- Ինչո՞ւ է գիտնական առանձնացրել այս 4 սրվակներով ջրերը և ո՞րն է դրանց գորությունը:

Այնուհետև ուսուցիչը ներկայացնում է

անորոշերում պարունակվող ջրերն՝ ըստ հետևյալ հաջորդականության.

1-ին անորում պարունակվող ջուրը հանված է 100 մ խորությունից, սառեցված-հալեցված ջուր է, ու եթե մարդն ամեն օր հնարավորություն ունենա

սովորական ջրի փոխարեն խմելու այսպիսի ջուր, ապա նրա կյանքը կերպարի 1,5 անգամ:

2-րդ անորում արծաթաջուր է, որն ունի ուժեղ մանրէասպան հատկություն:

Նրա ազդեցության արդյունքում բարձրանում է օրգանիզմի դիմադրողականությունը, ճնշվում են մակարույժ սնկերը և վիրուսները, բարելավվում է աղիների միկրոֆլորան:

3-րդ անորում օրինված ջուր է: Տեսակետ կա, որ աղոթքի ժամանակ արտաքերված հնչյունների տատանման հաճախականությունը համընկնում է էլեկտրամագնիսական դաշտի տատանումների հաճախականությանը: Այսպիսի ջուրը բուժում է ոչ միայն մարմինը, այլև հոգին:

4-րդ սրվակին հասնելով շեշտվում է, որ անվանի գիտանականը երեխաների մասին էլ է մտածել, և այդ առումով հատկանշական է ջրի այս տեսակը:

Այնուհետև ուսուցիչը սրվակի պարունակությունը ֆիլտրում և ֆիլտրը պահում աշակերտների տեսադաշտում, որի վրա նկատվում են կեղտարձեր՝ մուր, այլ նյութերի հետքեր: Դրանցից հետո պարզաբանվում է, որ այս ջուրը հավաքել է ձյան հալոցքի արդյունքում և կիրառելի չէ: Ուրեմն, ձյուն ուտել չի կարելի, քանի որ ունի օդից վերցրած շատ վտանգավոր նյութեր /նկատվում է դասարանի աշխատմացում/:

Իրազննական-ցուցադրական մեթոդի կիրառության արդյունքում սովորողների հիշողության մեջ արմատավորվում են առարկաներն ու երևույթները: Լաբորատոր-գործնական պարապմունքների ընթացքում կատարվում է սովորողների տեսական գիտելիքների ստուգում և գնահատում: Արդյունքում ամրապնդվում է նյութը, զարգանում սովորողների աշխատանքային ունակություններն ու հմտությունները: Այստեղ հարկ է մեկ անգամ ևս նշել այն հանգամանքը, որ ուսուցիչը դասի

ժամանակ որևէ փորձ իրականացնելուց առաջ պարտավոր է այն կատարել նախապես՝ համոզվելու խնդրային մեջ: Լինում են դեպքեր, երբ դասի ժամանակ կատարվող փորձը չի տալիս անհրաժեշտ արդյունքը կամ արդյունքը լինում է ոչ այնքան գոհացնող՝ կապված ինչ-ինչ պատճառների հետ: Ուստի նախապես իրականացրած նախապատրաստական բնույթի աշխատանքները ուսուցչին հնարավորություն են տալիս ճիշտ ժամանակին վերացնելու փորձի հետ առնչվող բոլոր անձնությունները:

Դասարանում ուսուցչի կողմից իրականացվող փորձերը կազմակերպվում են ցուցադրական խմբային եղանակով և կարող են լինել կարճ կամ տևական ընթացքի մեջ: Կարճ փորձերի օրինակ են՝ սերմերի ծլման անհրաժեշտ պայմանները, տերևներում ածխաջրերի առաջացնան կամ տերևի կողմից ջրի գոլորչիացման պրոցեսները, բույսի սերմերում հանքային աղերի ու ջրի պարունակությանը վերաբերվող փորձերը՝ բուսաբանության բաժնից: Կարճատև փորձեր են իրականացվում նաև կենդանաբանության, մարդ-անատոմիայի բաժինների ուսումնախրության ժամանակ՝ կապված քջի, բակտերիաների կառուցվածքի նկարագրության, կենդանիների և նրանց օրգան-համակարգերի կառուցվածքային առանձնահատկությունների, տեղադրության, զգայական օրգանների նշանակության, ուկրերի կառուցվածքի, բաղադրության ու կատարած գործառույթների շուրջ:

Տևական փորձերը դրվում են բորբոսասնկերի, բակտերիաների, միաբջիջ կենդանիների, տարրեր կուլտուրաների ածեցման, հյուսվածքների պատրաստուկների պատրաստման, կենդանիների և բույսերի խաչաերման, ռեֆլեքսների հետ կապված դիտումների, ինչպես նաև տարրեր էկրողիական գործոնների՝ օրգանիզմների վրա ունեցած ազդեցությունների ուսումնախրման ժամանակ:

Մարդ անատոմիայի դասագրքում տեղ գտած <<Լուղական վերլուծիչ>> կամ <<Սեր տեղեկատվական գործակալները>> թեմայի ուսուցման ժամանակ դասը ցանկալի է սկսել աշխարհահռչակ երաժիշտ Բերիովենի նկարի ցուցադրությամբ: Ապա հաջորդում է կենսագրական որոշ մանրամասների նկարագրությունը, որն ուղեկցվում է կոմպոզիտորի հեղինակած <<9-րդ սիմֆոնիայով>>: Ներկայացվում է, որ այն ստեղծելիս Բերիովենն այլև չեր լսում լսում [2, էջ 49]: Որսալով աշակերտների զարմացկություն հայացքները՝ պարզաբանվում է, որ Բերիովենին այդպես էլ բախտ չվիճակվեց լսելու իր հրաշալի ստեղծագործությունը՝ սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, և լսում էր միայն այն ժամանակ, երբ անձամբ էր կատարում դաշնամուրի վրա: Այստեղ է, որ նախապատվությունը տրվում է ոչ թե խոսքին, այլ փորձին, քանի որ ոչ մի կանոն ու խոսք այդպես չի կարող ստիրեցնել երեխային, որքան փորձն ու ցուցադրությունը: Ընտրելով ստվորողներից մեկին, ցուցադրվում է, թե ինչպես է իրականում լսել խոսք երաժշտը: Փորձի համար օգտագործվում է կամերտոն: Աշակերտին հանձնարարվում է ցուցափայտի սուր մասը պահել կտրիչ ատամներով, իսկ հակառակ կողմը մոտեցնել կամերտոնի ոտիկին: Թվիկներին հարվածելիս փորձարկվող աշակերտը լսում է ձայնը, սակայն մնացած երեխաները չեն լսում: Փորձն ասում է, որ բացի ձայնային հաղորդականությունից կա նաև ուկրային հաղորդականություն, որի շնորհիվ աշակերտը լսել է ձայնը: Նույն կերպ Բերիովենն իր դիրիժորական փայտիկի ծայրը պահել է կտրիչ ատամներով, իսկ մյուս ծայրը հապել դաշնամուրի ստեղներին և այդպես լսել: Ահա թե որն է խոսք կոմպոզիտորի ստեղծագործելու գաղտնիքը [2, էջ 49]:

Կենսաբանության դասերի արդյունավետության գործում անգնահատելի դերակատարում ունի երսկուրսիան, որի միջոցով ստվորողները մոտիկից ծանոթանում հայրենի բնույթյունը, անմիջական շիման մեջ գտնվում կենդանի օրգանիզմների հետ: Շանաշողական բնույթի ցանկացած էքսկուրսիա միայն ու միայն ամրապնդում է ստվորողների գիտելիքների պաշարը, ընդլայնում նրանց մտահորիզոնը:

Շանաշողական էքսկուրսիաները կամ, ինչպես շատ հաճախ ասում են՝ ուսումնական ճամփորդությունները, որպես ուսումնական նախագծեր, կարևոր դեր են կատարում ստվորողների աշխարհայացքի ճավորման համար: Ոչ փորմալ կրթության այս ձևը նպաստում է նոր փոխհարաբերությունների, նոր գիտելիքների և կարողությունների ճաւարժմանը: Սովորողը դպրոցից դուրս հանդիպում է տվյալ բնագավառի լավագույն մասնագետներին, լսում նրանց խոսքը, որը նպաստում է նաև մասնագիտական կողմնորոշմանը:

Նախօրոք բննարկվում է տվյալ ճամփորդության նպատակը, խնդիրները և այլ կազմակերպչական հարցեր: Սովորողները համացանցից նյութեր են հայթայթում՝

պատրաստվելով

Շատ կարևոր է, որ սովորողը ընկալի տվյալ ճամփորդության կանորությունը և այն շիխությունը եւ հերթական ժամանց, այլ նյութը յուրացնի գործնական կիրառման մեջ, հասկանա ստացած գիտելիքի նշանակությունը:

Ուսումնական ճամփորդությունները և դիտումները կազմում են կենսաբանության դաշնօքացի կարևոր մասը: Դրանք կարող են կրել ինչպես սովորական, այնպես էլ վիրտուալ բնույթ: Եքսկուրսիաների ժամանակ անմիջական շփում է իրականացվում շրջակա միջավայրի հետ, հնարավոր պայմաններ է ստեղծվում լավ ու խորը ճանաչելու աշակերտին՝ նրա բնավորության որոշ գծերին, հոգեբանությանը, վարքի որոշ դրսուրումներին: Սա նաև ուսուցչի դաստիարակչական աշխատանքի միջու կազմակերման յուրօրինակ ձև է: Կազմակերպվում են այցելություններ բանգարաններ, բուսաբանական, կենդանաբանական այգիներ, մանրէաբանության ու գենետիկայի գիտահետազոտական ինստիտուտներ, բժշկական, անասնաբուժական-անասնաբուժական, գյուղատնտեսական ինստիտուտների լաբորատորիաներ:

Եքսկուրսիաների ժամանակ ուսուցանվող թեմայի տեսական նյութը գուգակցվում է գործնականին, ապահովելով անցած նյութի ավելի խոր և բազմակողմանի մատուցումը: Նախքան եքսկուրսիայի մեկնելը, ուսուցիչը պարտավոր է իրականացնել նախապատրաստական աշխատանք, որտեղ նա սովորողներին նախապատրաստում է աշխատանքի ողջ ընթացքին, եքսկուրսիայի ժամանակ համար երևույթներին, անվտանգության պահպանման կանոններին:

Աշխատանքը ինքնին բավականին պատասխանատու է, որի գրագետ և միջու կազմակերպման արդյունքում կենսաբանություն առարկայի ուսուցումը էլ ավելի հետաքրքիր ու հազեցված է դառնում: Իսկ դրա իրականացումը պայմանավորված է ուսուցչի վարպետությունը:

Այսօր մանկավարժի համար գոյություն ունեն բարդություններն ու խոշնդունները հարթելու, սովորողների հոգեկան ու մտավոր աշխարհի վրա ներազդելու տարատեսակ ձևեր ու հնարներ, որոնց օգնությամբ հնարավոր է զինել նրանց գիտելիքներով, դաստիարակել հայրենասիրական ոգով տողորված պատասխներ ու աղջիկներ:

Իրավացի էր մեծն Կոմիտասը,, երբ ասում էր՝ <<Եթե մանուկ չի հասկանար ձեր դասաւանդութիւնը՝ յանցանքը ձերն է, որովհետեւ չէր կրցած հասկանալ անոր ոգին. պէտք է վար իշնել մինչև անոր հոգեկան աստիճանը, եւ զայն առնելով՝ ձեզի հետ բարձրացնել >>:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ.Ա. Ակրտչյան-<<Կրթության կազմակերպման կողեկանի եղանակի կայացման հիմնահարցերը>>: Երևան 2001թ.
2. Պ. Կ. Սվաճյան, Ս. Գ. Ստեփանյան-<<Կենսաբանության ուսուցման մեթոդիակա>>, 1978թ.
<<Լույս>>
3. Ս. Բ. Գալոյան -<<Մանկավարժության գիտական հիմքերի ստեղծման անհրաժեշտության մասին>>: Մանկավարժություն -2014, 4:

Տեղեկություններ հեղինակի մասին՝

Վարդուի Հովհաննիսյան ԼՂՀ Քաշարադի շրջան ք.Բերձորի,

Վահան Թերեյանի անվան համար 1 միջն.դպրոցի կենսաբանության ուսուցչուիի

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, գ.գ.դ., Գ.Ա. Հակոբյանը: